ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հաց-հացաբուլկեղեն եւ միս տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրիր ունենալը

ՊԱՐՏԱԴԻՐ Է

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը տեղեկացնում է, որ, համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, սննդամթերքի փոխադրումը պետք է իրականացվի սննդամթերքի անվտանգության ոլորտի իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանող փոխադրամիջոցներով, որի համար Ծառայությունը տրամադրում է **սանիտարական անձնագիր:**

Ծառայության կողմից հաստատվել է սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների սանիտարական անձնագրի օրինակելի ձևը և տրամադրման կարգը (ՀՀ ԳՆ ՍԱՊԾ պետի 2017 թվականի մայիսի 14-ի N 85-Ն հրամանը կարող եք գտնել snund.am և arlis.am կայքերում):

Սննդամթերքի իրացման կամ հանրային սննդի կետերը, համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, **պարտավոր են ընդունել սննդամթերքը միայն այն փոխադրամիջոցից, որն ունի սանիտարական անձնագիր:**

Սանիտարական անձնագիրը տրամադրվում է սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոց շահագործող իրավաբանական անձի ղեկավարին, անհատ ձեռնարկատիրոջը կամ ֆիզիկական անձին, մեկ տարի ժամկետով և անվճար:

Անձնագիրը տրամադրվում է ըստ սննդամթերքի տեսակների՝ մսի, մսամթերքի, կաթի, կաթնամթերքի, ճարպայուղային արտադրանքի, ձվի, ձվամթերքի հացի, հացաբուլկեղենի, հրուշակեղենի, խմելու հանքային ջրերի, ոչ ալկոհոլային ըմպելիքների, մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի, պաղպա-

ղակի, ձկնամթերքի, հատկապես արագ փչացող սննդամթերքի, մասնագիտացված սննդամթերքի, սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների, ցորենի, թարմ պտուղ-բանջարեղենի փոխադրման համար:

Հաց-հացաբուլկեղեն և միս տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրերի պահանջը կգործի արդեն 2017թ. սեպտեմբերի 1-ից (ժամանակացույցը կցվում է): Մնացած տեսակների սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի առկայությունը պարտադիր է 2020 թվականի հուլիսի 1-ից:

Տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու համար կարող եք զանգահարել Ծառայության **«Թեժ գծին»՝ 206040** հեռախոսահամարով:

Էլ. փոստ՝ ssfs@ssfs.am
Կայք՝ www.ssfs.am, www.snund.am

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Հաց-հացաբուլկեղեն և միս տեղափոխող փոխադրամիջոցների համար սահմանված ժամանակացույց

ՀԱՑ, ՀԱՑԱԲՈՒԼԿԵՂԵՆ		
1.	Պետական գնումներ	2017 թվականի սեպտեմբերի 1-ից
2.	Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ	2017 թվականի սեպտեմբերի 1-ից
3.	Երևան քաղաքի մանկական նախադպրոցական հիմնարկներ (մանկամուր, մանկապարտեզ և այլն, հատուկ ուսումնական կրթական հիմնարկ), երեխաներին խնամք տրամադրող՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատների), խնամքի գիշերօթիկ հաստատություններ, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, երեխաների աջակցության կենտրոններ, սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպություններ, դպրոցականների ամառային առողջարարական ճամբարներ և այլ առողջարանային մանկական զվարճանքի կազմակերպություններ, առողջարաններ, հանգստյան տներ, մարզաառողջարանային կազմակերպություններ, ծերանոցներ (ոչ պետական գնումներով)	2017 թվականի սեպտեմբերի 1-ից
4.	Երևան քաղաքի ուսումնադաստիարակչական հիմնարկներ (բուհեր, հանրակրթական դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, մարզադպրոցներ, ուսումնարաններ, նախամասնագիտական և մասնագիտական կրթության կազմակերպություններ, արվեստի դպրոցներ	2017 թվականի սեպտեմբերի 1-ից

5.	Երևան քաղաքի առևտրի իրականացման վայրեր	2017 թվականի նոյեմբերի 1-ից
6.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի առևտրի իրականացման վայրերում	2018 թվականի ապրիլի 1-ից
7.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի հանրային սննդի կազմակերպման և հյուրանոցային տնտեսության օբյեկտներ,	2018 թվականի ապրիլի 1-ից
8.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի մանկական նախադպրոցական հիմնարկների (մանկամսուր, մանկապարտեզ և այլն, հատուկ ուսումնական կրթական հիմնարկ), երեխաներին խնամք տրամադրող՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատների), խնամքի գիշերօթիկ հաստատությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների, երեխաների աջակցության կենտրոնների, սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպությունների աշխատողներ, ովքեր անմիջապես իրականացնում են երեխաների սպասարկումը, դպրոցականների ամառային առողջարարական ճամբարների և այլ առողջարանային մանկական զվարճանքի կազմակերպություններ, դպրոցականների ամառային առողջարարական ճամբարների և այլ առողջարանային մանկական զվարճանքի կազմակերպություններ, առողջարաններ, հանգստյան տներ, մարզաառողջարանային կազմակերպություններ, ծերանոցներ (ոչ պետական գնումներով)	2018 թվականի ապրիլի 1-ից
9.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի ուսումնադաստիարակչական հիմնարկներ (բուհեր, հանրակրթական դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, մարզադպրոցներ, ուսումնարաններ, նախամասնագիտական և մասնագիտական կրթության կազմակերպություններ, արվեստի դպրոցներ	2018 թվականի ապրիլի 1-ից

ՄԻՍ		
1.	Պետական գնումներով սպանդանոցային ծագման մսի ձեռքբերում	2017 թվականի սեպտեմբերի 1-ից
2.	Մսամթերքի արտադրություն (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2017 թվականի նոյեմբերի 1-ից
3.	Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2018 թվականի ապրիլի 1-ից
4.	Երևան քաղաքի տեղական սպանդանոցային ծագման մսի առևտրի իրականացման վայրերում	2018 թվականի մարտի 1-ից
5.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի տեղական սպանդանոցային ծագման մսի առևտրի իրականացման վայրերում	2018 թվականի հունիսի 1-ից
6.	ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում)	2018 թվականի հուլիսի 1-ից

Ինչպես ստանալ փոխադրամիջոցի սանիտարական անձնագիր

Սանիտարական անձնագիր ստանալու համար փոխադրամիջոցը շահագործող անձը **պետք է դիմում ներկայացնի ՍԱՊԾ սպասարկման կենտրոն կամ մարզային կենտրոն՝** կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝

1. դիմում՝ համաձայն ձև N1-ի (տես՝ N 85-Ն հրաման),
2. անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականի, ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,

3. հայտարարություն փոխադրամիջոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարահամաճարակային և հիգիենիկ, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն ձև N2-ի (տես՝ N 85-Ն հրաման), *եթե փոխադրամիջոցը գործարանային նշանակությամբ տվյալ սննդամթերքի փոխադրման համար է նախատեսված,*

4. կամ փոխադրամիջոցի սանիտարահամաճարակային և հիգիենիկ, ինչպես նաև ինժիներատեխնիկական պահանջներին համապատասխանության մասին մասնագիտացված կազմակերպության եզրակացությունը, *եթե փոխադրամիջոցը գործարանային նշանակությամբ տվյալ սննդամթերքի փոխադրման համար նախատեսված չէ,*

5. փոխադրամիջոցի տեխնիկական անձնագրի կամ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճենը:

Սանիտարական անձնագիրը տրվում է՝

✓ տնտեսվարողի կողմից **դիմումն ստանալուց անմիջապես հետո**, եթե փոխադրամիջոցը մինչև 3 տարվա արտադրության է և նախատեսված է գործարանային նշանակությամբ տվյալ սննդամթերքի փոխադրման համար,

✓ **3 աշխատանքային օրվա ընթացքում,** եթե տնտեսավարողը ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ փոխադրամիջոցի սանիտարահամաճարակային և հիգիենիկ, ինչպես նաև ինժիներատեխնիկական պահանջներին համապատասխանության մասին մասնագիտացված կազմակերպության եզրակացությունը,

✓ առնվազն **15 աշխատանքային օրվա ընթացքում,** եթե տնտեսավարողը դիմել է լիազոր մարմնի կողմից փոխադրամիջոցի սանիտարահամաճարակային և հիգիենիկ, ինչպես նաև ինժիներատեխնիկական պահանջներին համապատասխանության մասին մասնագիտացված կազմակերպության եզրակացությունը ստանալու համար:

Սանիտարական անձնագիր ստանալու համար տնտեսվարողը առձեռն, փոստով **(ք. Երևան, 0051, Կոմիտաս 49/2)** կամ էլեկտրոնային եղանակով **(ssfs@ssfs.am)** փաստաթղթերը ներկայացնում է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սպասարկման կենտրոն կամ մարզային կենտրոն:

Տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու համար կարող եք զանգահարել՝

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Թեժ գիծ»՝ 010 206040

Էլ.փոստ՝ ssfs@ssfs.am
Կայք՝ www.ssfs.am, ww.snund.am